Գործ ԵԱՆԴ 0895/02/13

Վ Ճ Ի Ռ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

26 փետրվարի 2014 թվական քաղաք Երևան

Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների
ընդհանուր իրավասության դատարանը

Նախագահությամբ՝ դատավոր Աիդա Դավթյանի
Քարտուղարությամբ՝ Ագնետա Հակոբյանի
Մասնակցությամբ՝
Քաղաքացի՝ Ժուլետա Ամարիկյանի
/անձնագիր՝AM 0709634/
Քաղաքացու ներկայացուցիչ՝ Տիգրան Հայրապետյանի
/փաստ. գործ. արտոնագիր թիվ 159/

Դռնբաց դատական նիստում, դատարանում, քննելով քաղաքացիական գործն ըստ դիմումի Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության Ավանի հոգեբուժական կլինիկայի ղեկավար Ա. Հակոբյանի՝ քաղաքացի Ժուլետա Դավաթիի Ամարիկյանին հոգեբուժական հիվանդանոցային հարկադիր բուժման ենթարկելու պահանջի մասին.

Պ Ա Ր Զ Ե Տ

<u>Դատավարական նախապատմությունը.</u>

ՀՀ Առողջապահության նախարարության «Հոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության Ավանի հոգեբուժական կլինիկայի ղեկավար Ա. Հակոբյանը 2013 թվականի հունիսի 01-ին դատարանին ներկայացրած դիմումով խնդրել է թույլատրել քաղաքացի Ժուլետա Դավաթիի Ամարիկյանին ենթարկել հոգեբուժական հիվանդանոցային հարկադիր բուժման:

Դատարանի 2013 թվականի հունիսի 01-ի որոշմամբ/ դատավոր է. Ամալյան/ դիմումն ընդունվել է վարույթ և քաղաքացի Ժուլետա Դավաթիի Ամարիկյանի հոգեբուժական հաստատությունում գտնվելու ժամկետը երկարաձգվել է մինչև քաղաքացիական գործով վճիռն օրինական ուժի մեջ մտնելը:

Դատարանի 04.06.2013թվականի վճռով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հոգեբուժական բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության Ավանի հոգեբուժական կլինիկայի ղեկավար Ա.Հակոբյանի դիմումի պահանջը բավարարվել է՝ քաղաքացի Ժուլետա Դավաթիի Ամարիկյանի /ծնված 1960թ., բնակ. ք. Երևան, Սվաճյան 12շ., բն. 85 հասցեում/ նկատմամբ նշանակվել է հարկադիր բուժում՝ նրան տեղավորելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հոգեբուժական բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության Ավանի հոգեբուժական կլինիկայում:

Պետական տուրքի հարցը համարվել է լուծված:

Ժուլետա Դավաթիի Ամարիկյանը և նրա ներկայացուցիչ Տիգրան Հայրապետյանը 10.07.2013թ. ներկայացրել են վերաքննիչ բողոք, որը վերադարձվել է ՀՀ վերաքննիչ դատարանի 17.07.2013թ. որոշմամբ:

Ժուլետա Դավաթիի Ամարիկյանի ներկայացուցիչ Տիգրան Հայրապետյանը, ՀՀ վերաքննիչ դատարանի վերը նշված որոշման դեմ, 22.07.2013թ. ներկայացրել է վճռաբեկ բողոք, որը ՀՀ վճռաբեկ դատարանի 14.08.2013թվականի որոշմամբ վերադարձվել է:

Ժուլետա Դավաթիի Ամարիկյանի ներկայացուցիչ Տիգրան Հայրապետյանի կողմից 18.09.2013թ. կրկին ներկայացվել է վճռաբեկ բողոք, որը ՀՀ վճռաբեկ դատարանի 02.10.2013թվականի որոշմամբ կրկին վերադարձվել է:

Վերաքննիչ բողոքը, թերությունները շտկված վիճակում, կրկին ներկայացվել է ՀՀ վերաքննիչ դատարան 08.08.2013թվականին և այն վարույթ է ընդունվել ՀՀ վերաքննիչ դատարանի 04.11.2013թ որոշմամբ: Նույն որոշմամբ բավարարվել է Ժուլետա Դավաթիի Ամարիկյանի ներկայացուցիչ Տիգրան Հայրապետյանի միջնորդությունը՝ պետական տուրքի վճարումից ազատելու մասին:

ՀՀ վերաքննիչ դատարանի 03.12.2013թվականի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ մասնակի բեկանվել է Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վճիռը և գործն ուղարկվել է նույն դատարան նոր քննության:

Քաղաքացիական գործն ուղարկվել է ընդհանուր իրավասության դատարան, 31.01.2014թվականին մակագրվել է դատավոր Աիդա Դավթյանին, որն էլ իր 31.01.2014թվականի որոշմամբ ընդունել է վարույթ և դատական նիստ է նշանակել 12.03.2014թվականին:

<u>Դիմողի իրավական դիրքորոշումը.</u>

ՀՀ առողջապահության նախարարության «Հոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության Ավանի հոգեբուժական կլինիկայի ղեկավար Ա.Հակոբյանը դիմելով դատարան հայտնել է, որ որ Ժուլետա Դավաթիի Ամարիկյանը 2013 թվականի մայիսի 30-ին ընդունվել է ՀԲԿ Ավանի հոգեբուժական կլինիկա «սուր զառանցական համախտանիշ» նախնական ախտորոշմամբ: Հիվանդը չի ստորագրել բուժման համար համաձայնության դիմումը: Ժուլետա Ամարիկյանը հաշվառված է ՀԲԿ Ավանի հոգեբուժական կլինիկայում: Ժուլետա Ամարիկյանը 01.06.2013թ-ին զննվել է բժշկական հանձնաժողովի կողմից: Հիվանդի ներկա հոգեկան վիճակը անհրաժեշտություն է առաջացնում նրան հարկադրաբար բուժելու: Իր ներկա հոգեկան վիճակով Ժուլետա Ամարիկյանը վտանգ է ներկայացնում իր և շրջապատի նկատմամբ և կարիք ունի ստացիոնար բուժման:

Դիմող կողմը դատարանից խնդրել է թույլ տալ Ժուլետա Ամարիկյանին ենթարկել հարկադրական բուժման:

Դիմողի ներկայացուցիչը պատշաճ ձևով տեղեկացված լինելով դատական նիստի ժամանակի և վայրի մասին , չի ներկայացել և չի խնդրել գործը քննել իր բացակայությամբ:

Դատարանը ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածի 2-րդ մասով գործը քննեց դիմող կողմի բացակայությամբ:

<u>Քաղաքացի Ժուլետա Ամարիկյանի դիրքորոշումը</u>.

Քաղաքացի Ժուլետա Ամարիկյանը դատաքննության ժամանակ հայտնեց, որ ինքը հիվանդ չէ, վթարի է ենթարկվել, ստացել բուժումներ և քանի որ վթարի հետևանքով բազմաթիվ կոտրվածքներ է ստացել մինչ օրս ունի բուժման կարիք: Ինքը 22 տարի դեղ չի խմել, ալերգիա ունի, ուստի, հիմնականում սնվում է մրգերով, բանջարեղենով, կաթնամթերքով: Ինքը ցանկանում է ունենալ իր առանձին անկյունը և ապրել առանձին, պահանջում է, որ վաճառեն բնակարանը, սակայն չեն վաճառում: Եղբոր կինն իրեն ծեծում է, իր անվան հետ խաղում, ինքը չի ուզում նրանց հետ ապրել: Ինքը ճողվածքներ ունի, ինչի պատճառով բարձր է խոսում: Ինքը

տրավմա է ստացել, որի հետևանքով ալերգիա ունի և ոչ մի դեղ չի խմում, ինքն առողջ է և հոգեբուժական կլինիկայում բուժման կարիք չունի:

Քաղաքացի Ժուլետա Ամարիկյանի ներկայացուցիչ Տիգրան Հայրապետյանի դիրքորոշումը.

Քաղաքացի Ժուլետա Ամարիկյանի ներկայացուցիչ Տիգրան Հայրապետյանն առարկեց դիմումի պահանջի դեմ՝ պնդեց վերաքննիչ, վճռաբեկ բողոքներով ներկայացված փաստարկները հետևյալի մասին՝

2013թվականի մայիսի 29-ի երեկոյան Ժուլետա Ամարիկյանի եղբայրը՝ Մուրազ Ամարիկյանը և Ժուլետա Ամարիկյանը վիճել են: Վեճի ընթացքում Մուրազ Ամարիկյանը սպառնացել է քրոջը ասելով. «ես կզանգեմ հոգեբուժարան, քո թղթերը պատրաստ են»:

Սպառնալիքներից հետո հաջորդ առավոտյան՝ մայիսի 30-ին Ժուլետա Ամարիկյանին՝ ոստիկանության աշխատակիցների ուղեկցությամբ, բռնի ուժով շտապօգնության մեքենայով տեղափոխել են հոգեբուժարան: Այդ ընթացքում ոստիկանության աշխատակիցները բռնություն են գործադրել, սակայն Ամարիկյանը որևէ հակաօրինական վարքագիծ չի ցուցաբերել և **զառանցական մտքեր չի արտահայտել:**

Ժուլետա Ամարիկյանի և նրա եղբոր միջև բնակարանային վեճ կա և եղբայրը չի ցանկանում ժառանգական գույքը վաճառել և քրոջ բաժինը նրան տալ, այդ իսկ պատճառով Մուրազ Ամարիկյանը կազմակերպել և հիվանդանոցում որպես հոգեկան հիվանդ է տեղավորել քրոջը:

Ժուլետա Ամարիկյանը հոգեկան հիվանդ չէ: Նա մոտ մեկ ամիս տառապել է հոգեբուժարանի մթնոլորտից ու մնալու պայմաններից: Առաջին հինգ օրերը չի սնվել, բացի ջրից, որևէ բան չի կերել:

Նա հրաժարվել է նրանց տված դեղերից, քանի որ երբ առաջին օրը խմել է այդ դեղերը, սիրտը վատացել է և չի կարողացել ողջ գիշեր քնել: Բժիշկները տեղյակ են եղել, որ նա դեղերը չէր խմում և նրանք փորձել են, դեղերը փշրանք դարձնելով, ստիպելով խմեցնել նրան, ինչպես նաև դուրս գրելիս նրան ստիպողաբար ներարկել են:

Հիվանդանոցում գտնվելու ողջ ընթացքում նա տանջվել և տառապել է, ոտնահարվել և ստորացվել է նրա արժանապատվությունը: Հոգեկան հիվանդները անընդհատ ծեծել և հայհոյել են միմյանց և գողացել միմյանց ուտելիքները: Հիվանդանոցում գտնվելու պատճառով նա մեծ զրկանքներ է կրել, նրան ստիպողաբար սրկսել են, ինչի հետևանքով նա տառապում է ոտքի և մեջքի ցավերից և ստիպված է քայլակով տեղաշարժվել:

Ամարիկյանի փաստաբանի գրությունից հետո նրան անմիջապես դուրս են գրել հիվանդանոցից և Ամարիկյանը այժմ լիարժեք առողջ է: Նա ըստ էության ոչ մի դեղ չի խմել բուժման ընթացքում և նրա առողջական վիճակը որևէ փոփոխության չի ենթարկվել:

Վկայակոչելով ՀՀ Սահմանադրության 16-րդ, 18-րդ և 19-րդ հոդվածները, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվեցիայի 5-րդ հոդվածը, «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 8-րդ, 13-րդ կետերը, նույն օրենքի 22-րդ հոդվածը, 1983 թ. փետրվարի 22-ին Եվրոպայի խորհրդի նախարարների խորհրդի կողմից ընդունված «հոգեկան խանգարմամբ տառապող, որպես հարկադիր հիվանդներ տեղավորված անձանց իրավական պաշտպանության վերաբերյալ» թիվ R (83) հանձնարարականը, որի 3-րդ հոդվածը մասնավորապես նախատեսում է՝

«Համապատասխան բուժման այլ միջոցների բացակայության դեպքում՝

ա) հիվանդը կարող է տեղավորվել հաստատությունում միայն երբ հոգեբուժական խանգարման պատճառով նա լուրջ վտանգ է ներկայացնում իր և այլ անձանց համար...», խնդրեց մերժել դիմումի պահանջը:

1.Գործի փաստերը.

Դատարանը ուսումնասիրել և գնահատել է քաղաքացիական գործում եղած հետևյալ փաստաթղթերը.

• Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հոգեբուժական բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության Ավանի հոգեբուժական կլինիկայի հանձնաժողովի 2013 թվականի հունիսի 01-ի թիվ 0125-2099 եզրակացության համաձայն, Ժուլետա Դավաթիի Ամարիկյանը /բնակ. ք. Երևան, Սվաճյան 12-85 հասցեում/ ՀԲԿ Ավանի հոգեբուժական կլինիկա է ընդունվել շտապօգնության միջոցով 30.05.2013թ-ին «Սուր զառանցական համախտանիշ» նախնական ախտորոշմամբ: Հիվանդը չի ստորագրել համաձայնության դիմումը բուժման համար: Ժ. Ամարիկյանը ՀԲԿ Ավանի հոգեբուժական կլինիկայում հաշվառված է 25.02.2013թ-ից «Զառանցական խանգարում» ախտորոշմամբ: 01.06.2013թ-ին զննվել է բժշկական հանձնաժողովի կողմից: Հիվանդը խիստ լարված է, արտահայտում է թունավորման, հետապնդման զառանցական մտքեր, թշնամաբար է տրամադրված եղբոր ընտանիքի նկատմամբ, սպառնում է վերջիններիս: Ըստ հանձնաժողովի եզրակացության իր ներկա հոգեկան վիճակով Ժ.Ամարիկյանը վտանգ է ներկայացնում իր և շրջապատի նկատմամբ և կարիք ունի ստացիոնար բուժման:

• Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հոգեբուժական բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության Ավանի հոգեբուժական կլինիկայի ղեկավար Ա. Հակոբյանի 2013 թվականի հունիսի 01-ի թիվ 0125-2099 տեղեկանքի համաձայն, հիվանդ Ժուլետա Դավաթիի Ամարիկյանը, ծնված 1960թ-ին, իր ներկա հոգեկան վիճակով չի կարող ներկայանալ դատարան և մասնակցել նիստին:

• Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը կից միջգերատեսչական ամբուլատոր դատահոգեբուժական փորձագիտական հանձնաժողովի 04.10.2012թ-ի թիվ 340/12 եզրակացության համաձայն, «...հանձնաժողովը եզրակացնում է, որ Ժուլետա Դավաթիի Ամարիկյանը տառապում է «Զառանցական խանգարում» խրոնիկական հոգեկան հիվանդությամբ, ինչի մասին վկայում են ինչպես անամնեստիկ տվյալները, այնպես էլ ներկա հետազոտման արդյունքները, որոնք թույլ տվեցին փորձաքննվողի մոտ հայտնաբերել անհեթեթ բնույթի վերաբերման, հետապնդման, հատուկ նշանակության զառանցական մտքերը, մտածողության պարալոգիզմ անհետևողականություն, կտրտվածություն, անկապություն, հուզական ռեակցիաների բթացածություն, հարթվածություն, աղքատություն, ինտելեկտուալ-մնեստիկ խանգարումներ, քննադատական ունակությունների բացակայություն, ինչը փորձաքննվողի մոտ արտահայտված է այն աստիճանի, որ ինչպես իրավախախտումը կատարելու պահին, այնպես էլ ներկայումս զրկել է նրան իր գործողությունների վտանգավորությունը գիտակցելու և դրանք ղեկավարելու հնարավորությունից, ուստի Ժուլետա Դավաթիի Ամարիկյանին հարկ է կատարածի նկատմամբ ճանաչել անմեղսունակ: Կարիք ունի հարկադիր բուժման և հսկողության տարածքային հոգեբույժի մոտ: Իր ներկա հոգեկան վիճակով նա չի կարող մասնակցել դատաքննչական գործողություններին»:

2. <u>Կիրառելի իրավունքը/իրավական հիմնավորումը</u>

Համաձայն ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

Համաձայն Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի ու «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 1-ին կետի՝ բոլոր անձինք հավասար են դատարանների առջև, ինչպես նաև յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան

ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն շահագրգիռ անձն իրավունք ունի սույն օրենսգրքով սահմանված կարգով դիմել դատարան՝ ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 174-րդ հոդվածի համաձայն, քաղաքացու՝ հոգեբուժական հիվանդանոցային հարկադիր բուժման վերաբերյալ դիմում տալու իրավունք ունի այն հոգեբուժական հաստատության տնօրինությունը, որում բուժվում է քաղաքացին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 175-րդ հոդվածի համաձայն, քաղաքացու հոգեբուժական հիվանդանոցային հարկադիր բուժման վերաբերյալ դիմումը տրվում է քաղաքացուն հոգեբուժական հաստատությունում տեղավորելու պահից 72 ժամվա ընթացքում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 177-րդ հոդվածի համաձայն, դիմումի քննության արդյունքներով դատարանը կայացնում է վճիռ, որով մերժում կամ բավարարում է դիմումը: Դիմումը բավարարելու վերաբերյալ վճիռը հիմք է քաղաքացուն հոգեբուժական հաստատությունում հարկադիր բուժման ենթարկելու համար:

«Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն, հոգեկան խանգարման ախտորոշումը և բուժումն իրականացվում են միջազգային բժշկական ընդունված չափանիշներին համապատասխան և չեն կարող հիմնվել հասարակության ընդունած բարոյական, մշակութային, քաղաքական կամ կրոնական արժեքների հետ քաղաքացու անհամաձայնության կամ հոգեկան առողջության հետ անմիջական կապ չունեցող այլ պատճառների վրա:

«Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, հոգեկան խանգարումներով տառապող անձն առանց իր կամ օրինական ներկայացուցչի համաձայնության կարող է հոսպիտալացվել հոգեբուժական հանձնաժողովի կողմից պարտադիր հետազոտվելուց հետո, եթե. 1/ նա վտանգ է ներկայացնում իր կամ այլ անձանց համար, 2/ բուժում չիրականացնելը կամ բուժումը դադարեցնելը կարող է վատթարացնել հիվանդի առողջական վիճակը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի համաձայն գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը, իսկ նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն, եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականություն ունեցող կողմը:

ՀՀ քաղաքացիական դատավարության 49-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն ապացույցները ներկայացնում են գործին մասնակցող անձինք:

Նույն օրենսգրքի 51-րդ հոդվածի համաձայն գործի հանգամանքները, որոնք օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

<u>Դատարանի իրավական վերլուծությունը.</u>

Դատարանը, լսելով քաղաքացի Ժուլետա Ամարիկյանին և նրա ներկայացուցիչ Տիգրան Հայրապետյանին, ուսումնասիրելով գործի հանգամանքները և ներկայացված ապացույցները, յուրաքանչյուր ապացույց գնահատելով գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ, գտավ, որ դիմող ՀՀ առողջապահության նախարարության «Հոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության

Ավանի հոգեբուժական կլինիկայի ղեկավար Ա.Հակոբյանի դիմումը ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 174-րդ հոդվածի համաձայն, քաղաքացու՝ հոգեբուժական հիվանդանոցային հարկադիր բուժման վերաբերյալ դիմում տալու իրավունք ունի այն հոգեբուժական հաստատության տնօրինությունը, որում բուժվում է քաղաքացին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 177-րդ հոդվածի համաձայն, դիմումի քննության արդյունքներով դատարանը կայացնում է վճիռ, որով մերժում կամ բավարարում է դիմումը: Դիմումը բավարարելու վերաբերյալ վճիռը հիմք է քաղաքացուն հոգեբուժական հաստատությունում հարկադիր բուժման ենթարկելու համար:

Սույն գործով դատարանի կողմից սահմանված գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստը հետևյալն է. արդյո՞ք բժշկական հանձնաժողովի եզրակացությունը և բուժման կարիք ունեցող անձի կողմից բուժման համար համաձայնություն չտալը բավարար հիմք է քաղաքացուն հոգեբուժական հիվանդանոցային հարկադիր բուժման ենթարկելու համար:

Դատարանը հաստատված է համարում, որ Ժուլետա Դավաթիի Ամարիկյանը /ծնված 1960թ., բնակվող ք. Երևան, Սվաճյան 12շ., թիվ 85 բնակարանում/ 25.02.2013թվականից հաշվառված է ՀՀ ԱՆ ՀԲԿ Ավանի հոգեբուժական կլինիկայում «Ջառանցական խանգարում» ախտորոշմամբ:

Դատարանը հաստատված համարեց նաև, որ Ժուլետա Դավաթիի Ամարիկյանը 2013թվականի մայիսի 29-ի երեկոյան վիճաբանել է եղբոր՝ Մուրազ Ամարիկյանի հետ, որի հիմնական պատճառը ժառանգական գույք հանդիսացող բնակարանն է, որտեղ բնակվում են նրանք: Եղբայրը չի ցանկանում ժառանգական գույքը վաճառել և Ժուլետա Ամարիկյանի բաժինը տալ նրան: Վեճի ընթացքում Մուրազ Ամարիկյանը սպառնացել է քրոջը ասելով. «ես կգանգեմ հոգեբուժարան, քո թղթերը պատրաստ են»:

Սպառնալիքներից հետո հաջորդ առավոտյան՝ մայիսի 30-ին Ժուլետա Ամարիկյանին՝ ոստիկանության աշխատակիցների ուղեկցությամբ, բռնի ուժով շտապօգնության մեքենայով տեղափոխել են Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հոգեբուժական բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության Ավանի հոգեբուժական կլինիկա «սուր զառանցական համախտանիշ» նախնական ախտորոշմանբ:

«Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն, հոգեկան խանգարման ախտորոշումը և բուժումն իրականացվում են միջազգային բժշկական ընդունված չափանիշներին համապատասխան և չեն կարող հիմնվել հասարակության ընդունած բարոյական, մշակութային, քաղաքական կամ կրոնական արժեքների հետ քաղաքացու անհամաձայնության կամ հոգեկան առողջության հետ անմիջական կապ չունեցող այլ պատճառների վրա:

«Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, հոգեկան խանգարումներով տառապող անձն առանց իր կամ օրինական ներկայացուցչի համաձայնության կարող է հոսպիտալացվել հոգեբուժական հանձնաժողովի կողմից պարտադիր հետազոտվելուց հետո, եթե. 1/ նա վտանգ է ներկայացնում իր կամ այլ անձանց համար, 2/ բուժում չիրականացնելը կամ բուժումը դադարեցնելը կարող է վատթարացնել հիվանդի առողջական վիճակը:

Դիմողը և նրա ներկայացուցիչը պատշաճ ձևով տեղեկացված լինելով դատական նիստի ժամանակի և վայրի մասին չեն ներկայացել և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի ուժով կրելով իրենց կողմից վկայակոչած փաստերի ապացուցման բեռը՝ որ Ժուլետա Դավաթիի Ամարիկյանը այժմ վտանգ է ներկայացնում իր կամ այլ անձանց համար, իր ներկա հոգեկան վիճակով չի կարող ներկայանալ դատարան և մասնակցել նիստին, ինչպես նաև այն, որ բուժում չիրականացնելը կարող է վատթարացնել վերջինիս առողջական վիճակը, որևէ ապացույց չեն ներկայացրել դատարան:

Մինչդեռ, դրանք հերքվեցին գործով ձեռք բերված հետևյալ ապացույցներով, որ Ժուլետա Դավաթիի Ամարիկյանը դուրս է գրվել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հոգեբուժական բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության Ավանի հոգեբուժական կլինիկայից, թեև քայլակի օգնությամբ, սակայն ներկայացել է դատարան և դատարանի կողմից առաջադրված բոլոր հարցերին տվեց հստակ պատասխաններ, հայտնելով, որ իրեն լավ է զգում, ավելի լավ կզգա, եթե կարողանա վաճառել բնակարանը, իր համար գնել բնակարան ու առանձնանալ իր եղբորից ու նրա ընտանիքից: Կլինիկայում մնալը կարող էր իր վրա բացասական ազդեցություն ունենալ, մանավանդ, որ ալերգիկ է և հետևանքներից խուսափելու համար ինքը դեղեր չէր ընդունում:

Այսպիսով, գործի քննությամբ դատարանը հաստատված համարեց, որ բացակայում է Ժուլետա Դավաթիի Ամարիկյանին հոգեբուժական հիվանդանոցային հարկադիր բուժման ենթարկելու անհրաժեշտությունը:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի համաձայն, դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են հոգեբուժական հաստատությունները՝ քաղաքացուն հոգեբուժական հիվանդանոցային հարկադիր բուժման ենթարկելու վերաբերյալ դիմումներով:

Դատարանը գտնում է, որ համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 3-րդ մասի, պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 130-132-րդ, 140-րդ, 140[1]-րդ և 177-րդ հոդվածների պահանջներով, դատարանը.

Վ Ճ Ռ Ե Տ

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հոգեբուժական բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության Ավանի հոգեբուժական կլինիկայի ղեկավար Ա. Հակոբյանի դիմումը՝ Ժուլետա Դավաթիի Ամարիկյանին հոգեբուժական հիվանդանոցային հարկադիր բուժման ենթարկելու մասին, մերժել:

Վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո քաղաքացի Ժուլետա Դավաթիի Ամարիկյանի՝ հոգեբուժական հաստատությունում գտնվելու ժամկետը դադարեցնել:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով պարտապանի հաշվին:

Վճիռը վերաքննության կարգով կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան հրապարակման պահից մեկ ամսվա ընթացքում:

ԴԱՏԱՎՈՐ Ա. ԴԱՎԹՅԱՆ